ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/38/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26 հուլիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Նարեկ Համբարձումյանի, Արամայիս Փաշինյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հուլիսի 26-ին, քննելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Արամայիսի Ավագյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում, ինչպես նաև Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու փաստերի առթիվ 2022 թվականի հուլիսի 6-ին հարուցված թիվ ՎԻՎ/38/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, Էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով պարզել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Արամայիսի Ավագյանի 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Պետրոս Ավագյանը պաշտոնեական պարտականությունները ստանձնել է 2022 թվականի փետրվարի 1-ին: Հանձնաժողովի կողմից 2022 թվականի ապրիլի 26-ին Պետրոս

Ավագյանին գրավոր ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նշված ծանուցումը Պետրոս Ավագյանի կողմից ստացվել է 2022 թվականի ապրիլի 29-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 Հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 01/1241/2-2022 գրությամբ Պետրոս Ավագյանը 2022 թվականի հուլիսի 4-ին՝ ժամը 11:00-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.4 2022 թվականի հուլիսի 4-ին Պետրոս Ավագյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 41/22 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/38/22 գործի վարույթը: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ փոստային առաքման միջոցով ներկայացվել է Պետրոս Ավագյանին:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Պետրոս Ավագյանի բացակայությամբ 2022 թվականի հուլիսի 26-ին՝ ժամը 15:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.6 2022 թվականի հուլիսի 26-ի դրությամբ Պետրոս Ավագյանի կողմից ներկայացվել է 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը:

II. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/38/22 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

2.1 ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Արամայիսի Ավագյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին»

օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

2.2 Պետրոս Ավագյանի կողմից մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը և ժամը ներկայացվել է Հայտարարագիրը:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

3.1 ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Արամայիսի Ավագյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.2 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացվում են Հանձնաժողով:

3.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.9 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

3.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ նշանակությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային

հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Պետրոս Ավագյանի կողմից մինչև գործի քննության օրը Հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պետրոս Ավագյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/38/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պետրոս Ավագյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**